ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՍՆ-19/2-16

ք. Երևան «06» հունիսի 2016թ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զանգակ-97» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Սոկրատ Մկրտչյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 51811000 (հիսուն մեկ միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սփյուռքի նախարարություն	«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Կոմիտաս 49/2
ՖՆ Գործառնական վարչություն	«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011000107	Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ 02705838	ՀՎՀՀ00830786
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«06» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՍՆ-19/2-16
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հ/Հ	Անվանում	Նկարագիր	Քանակ	Միավոր ի գին	Ընդամենը գումար
1	«Զանգակ» Այբբենարան	20x28, օֆսեթ 70, 4+4, 112 էջ	3000	2400	7200000
2	Ես սովորում եմ գրել Ա1, Ա2 (Աշխատանքային տետր)	17x24, օֆսեթ 70, 2+4, 32, 32 էջ	2600	550	1430000
3	Ես սովորում եմ գրել, Բ1, Բ2 (Աշխատանքային տետր)	17x24 օֆսեթ 70, 2+4, 24, 24 էջ	2600	550	1430000
4	Հայրենագիտություն Ա	17x24 օֆսեթ 70, 4+4, 96 էջ	280	2200	616000
6	«Զանգակ» այբբենարանի և ես սովորում եմ գրել աշխատանքային տետրերի մեթոդական ուղեցույց	17x24 օֆսեթ 70, 1+4, 264 էջ	400	1600	640000
7	Իմ առաջին ընթերցարանը: Դասագիրք Սփյուռքի մեկօրյա դպրոցների համար	20x28 օֆսեթ 70, 4+4, 72 էջ	2200	1500	3300000
8	Մեթոդական ցուցումներ: «Իմ առաջին ընթերցարանը», «Մայրենի 2», «Մայրենի 3» և «Մայրենի 4» դասագրքերով աշխատելու վերաբերյալ	14.5x20, օֆսեթ 70, 1+4, 144 էջ	250	1200	300000
9	Մայրենի 2: Դասագիրք Սփյուռքի մեկօրյա դպրոցների համար	17x24 օֆսեթ 70, 4+4, 80 էջ	1500	1600	2400000
10	Մայրենի 2 (աշ. տետր 1)	17x24 օֆսեթ 70, 2+2, 32 էջ	1000	350	350000
11	Մայրենի 2 (աշ. տետր 2)	17x24 օֆսեթ 70, 2+2, 32 էջ	1000	350	350000
12	Մայրենի 3: Դասագիրք Սփյուռքի մեկօրյա դպրոցների համար	17x24, օֆսեթ 70, 4+4, 80 էջ	800	1600	1280000
13	Մայրենի 3 (աշ. տետր 1,2)	17x24 օֆսեթ 70, 2+2, 32, 32 էջ	800	700	560000
14	Մայրենի 4: Դասագիրք Սփյուռքի մեկօրյա դպրոցների համար	17x24 օֆսեթ 70, 4+4, 120 էջ	1500	1550	2325000
15	Մայրենի 4 (աշ. տետր 1)	17x24 օֆսեթ 70, 2+2, 32 էջ	1400	350	490000
16	Մայրենի 4 (աշ. տետր 2)	17x24 օֆսեթ 70, 2+2, 32 էջ	1400	350	490000

17	Հայոց լեզու (ուսումնական ձեռնարկ)	17x24 օֆսեթ 70, 1+4, 864 էջ	400	3300	1320000
18	Այբբենարան (արևմտահայերեն)	20x28 օֆսեթ 70, 4+4, 96 էջ	400	2500	1000000
19	Ընթերցարան 1 (արևմտահայերեն)	20x28 օֆսեթ 70, 4+4, 96 էջ	300	2500	750000
20	Ընթերցարան 2 (արևմտահայերեն)	20x28 օֆսեթ 70, 4+4, 96 էջ	300	2500	750000
21	Ուսուցանող գրավոր աշխատանքները տարրական դասարաններում 1,2	17x24 օֆսեթ 70, 1+4, 120 էջ	240	2300	552000
22	Ուսուցանող գրավոր աշխատանքները տարրական դասարաններում 3,4	17x24 օֆսեթ 70, 1+4, 240 էջ	240	2300	552000
23	Արեւմտահայերենի քերականություն 1	17x24 օֆսեթ 70, 4+4, 144 էջ	300	2500	750000
24	Արեւմտահայերենի քերականություն 2	17x24 օֆսեթ 70, 2+4, 168 էջ	300	2500	750000
25	Գործնական աշխատանքներ մայրենիից: Տարրական դասարաններ	17x24 օֆսեթ 70, 1+4, 144 էջ	360	2100	756000
26	Մայրենի 2: Գործնական աշխատանքների տետր	20x28 օֆսեթ 70, 2+4, 48 էջ	300	500	150000
27	Մայրենի 3: Գործնական աշխատանքների տետր	20x28 օֆսեթ 70, 2+4, 48 էջ	350	500	175000
28	Մայրենի 4: Գործնական աշխատանքների տետր	20x28 օֆսեթ 70, 2+4, 48 էջ	400	500	200000
29	Խոսք և հաղորդակցություն: Աշխատանքային տետր 1	20x28 օֆսեթ 70, 4+4, 32 էջ	350	500	175000
30	Խոսք և հաղորդակցություն: Մեթոդական ձեռնարկ 1	14.5x20 օֆսեթ 70, 1+4, 48 էջ	350	500	175000
31	Խոսք և հաղորդակցություն: Աշխատանքային տետր 2	20x28 օֆսեթ 70, 4+4, 44 էջ	300	500	150000
32	Խոսք և հաղորդակցություն: Մեթոդական ձեռնարկ 2	14.5x20 օֆսեթ 70, 1+4, 88 էջ	250	500	125000
33	Հայոց լեզու 5: Դասագիրք Սփյուռքի դպրոցների համար	17x24, օֆսեթ 70, 2+4, 144 էջ	500	2102	1051000
34	Հայ գրականություն 5: Դասագիրք Սփյուռքի դպրոցների համար	17x24 օֆսեթ 70, 4+4, 144 էջ	400	2100	840000
35	Մեծ Մեր (Հայոց լեզվի ուսումնական ձեռնարկ հայկական մեկօրյա	17x24, օֆսեթ 70, 4+4, 176 էջ	550	2500	1375000

	դպրոցների միջին և ավագ խմբերի ռուսախոս աշակերտների համար)				
36	«Մեծ Միեր» աշխատանքային տետր	17x24, օֆսեթ 70, 2+4, 144 էջ	550	2100	1155000
37	Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների ձեռնարկ տարրական դպրոցի համար	17x24, օֆսեթ 70, 1+4, 184 էջ	400	1500	600000
38	Թելադրությունների ձեռնարկ: Միջին դպրոցի համար	17x24, օֆսեթ 70, 1+4, 512 էջ	300	2300	690000
39	Փոխադրությունների ձեռնարկ: Միջին դպրոցի համար	17x24, օֆսեթ 70, 1+4, 400 էջ	250	2300	575000
40	Երաժշտությունը մանկապարտեզում	20x28, օֆ 70, 1+4, 220 էջ	200	3800	760000
41	Պլակատ – Այբուբեն: Պաստառ	50x70 կավճ 250 գ, 4, 1 էջ	250	500	125000
42	Պատկերազարդ այբուբեն	70x20 կավճ 250, 4+4, 2 էջ	500	500	250000
43	Նկարազարդ այբուբեն: Հայերեն տառերի գունազարդ հավաքածու	20x28 կավճ 250 գ, 4, 36 էջ	250	2400	600000
44	Հայաստանի հիմնը, գերբը, դրոշը: Պաստառ	50x70 կավճ 250 գ, 4, 1 էջ	250	500	125000
45	Арменоведение	17x24 օֆսեթ 70, 4+4, 120 էջ	250	2200	550000
46	Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը	17x24 օֆսեթ 70, 1+4, 352 էջ	500	2100	1050000
47	Համառոտ պատմություն հոյոց: Պատկերազարդ և հանրամատչելի:	17x24 օֆսեթ 70, 4+4, 264 էջ	400	2100	840000
48	История Армении (для воскрессных школ)	17x24 օֆսեթ 70, 4+4, 120 էջ	150	2100	315000
49	Самоучитель армянского языка	17x24 օֆսեթ 70, 1+4, 392 էջ	200	2200	440000
50	Հայերեն դպրոցական բացատրական բառարան	17x24 օֆսեթ 70, 1+4, 408 էջ	250	2800	700000
51	Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան	17x24, օֆսեթ 70, 1+4, 408 էջ	250	2800	700000
52	Հրավիրում ենք հանդեսի	17x24 օֆսեթ 70, 4+2, 228 էջ	250	2300	575000
53	50 հարց ու պատասխան: Մաս 1: Տարրական դասարանների ուսուցիչների համար	14.5x20, օֆսեթ 70, 1+4, 128 էջ	280	1600	448000

54	50 հարց ու պատասխան: Մաս 2: Տարրական դասարանների ուսուցիչների համար	14.5x20, օֆսեթ 70, 1+4, 136 էջ	200	1600	320000
55	Խոսքի զարգացում	14.5x20 օֆսեթ 70, 1+4, 296 էջ	120	1500	180000
56	Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա	14.5x20 օֆսեթ 70, 1+4, 352 էջ	250	1500	375000
57	Միջոցառումները տարրական դպրոցում	14.5x20 օֆսեթ 70, 1+4, 64 էջ	200	600	120000
58	Խաղալով սովորենք	14.5x20 օֆսեթ 70, 1+4, 80 էջ	250	900	225000
59	Խոսենք հայերեն (ուսումնական ձեռնարկ)	20x28 օֆսեթ 70, 4+4,72 էջ	250	650	162500
60	Խաղագիրք մանուկների համար 1-ին դասարան (ուսումնական ձեռնարկ)	17x24 օֆսեթ 70, 2+4, 64 էջ	210	500	105000
61	Խաղագիրք մանուկների համար 2-րդ դասարան (ուսումնական ձեռնարկ)	17x24 օֆսեթ 70, 2+4, 70 էջ	200	500	100000
62	Վաղը դպրոց կգնամ: Գիրք – տետր	17x24 օֆսեթ 70, 4+4, 56 էջ	300	450	135000
63	100 խաղ դպրոցականների համար	14,5x20 օֆսեթ 70, 1+4, 80 էջ	150	450	67500
64	Հայկական ավանդապատումներ	12x16.5: օֆսեթ 70, 1+4, 64 էջ	250	600	150000
65	Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի քարտեզ	50x70 կավճ. 130գ 4, 1 էջ	300	1700	510000
66	Կարդում ենք տանը և մանկապարտեզում	17x24 օֆսեթ 70, 2+4, 400 էջ	250	2400	600000
67	Բառատետր բառարան: 2-4-րդ դասարաններ	17x24 օֆսեթ 70, 2+4, 112 էջ	550	1200	660000
68	Զարգացնենք հնչյունային լսողությունը	20x29 օֆսեթ 70, 2+4, 80 էջ	500	820	410000
69	Հայկական ասեղնագործ ժանյակ. Վարպետության դասեր	22.5x21, կավճ. 130գ, 4+4, 104 էջ	250	3000	750000
70	Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա	17x24 օֆսեթ 70, 1+4, 316	300	2300	690000
71	Հայ գրականության քրեստոմատիա	14,5x20 օֆսեթ 70, 1+4, 176 էջ	300	800	240000
72	Պատրաստվում ենք հանդեսի: Առաջին մաս	14.5x20, օֆսեթ 70, 1+4, 176 էջ	240	1400	336000
73	Տառեր /դիտակտիվ նյութ/	10x15 կավճ 270, 4+4, 36 էջ	350	1200	420000
	ԸՆԴԱՄԵՆԸ				**51 811 000**

Կատարման սկիզբ	Կատարման ավարտ
2016թ հունիս	2016թ սեպտեմբեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ00830786

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
«06» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՍՆ-19/2-16
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութեր	-	-	-	-	-	11811000	21811000	31811000	41811000	51811000	51811000	51811000	51811000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան Վ. Սարգսյան 3
ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011000107
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
«Էյչ-Էս Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001-0040013-001
ՀՎՀՀ00830786

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«06» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՍՆ-19/2-16
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«06» հունիսի 2016թ.կնքված N ՀՀՄՆ-19/2-16
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն